Հավելված
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի 29 փետրվարի N 363-Ա հրամանի

ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՊԱՀՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում խոշոր եզրաչափի աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, պահման կարգը, հետագա երկրորդային օգտագործման և/կամ հեռացման կանոնները:

2. Սույն ընթացակարգի ընդունումը բխում է շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմանների ապահովման անհրաժեշտությունից և ուղղված է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված նպատակներին և սկզբունքներին:

3. Սույն ընթացակարգը պարտադիր է խոշոր եզրաչափի աղբ գոյացնողների, դրանց հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման հետ առնչվող համայնքների, օպերատորների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Խոշոր եզրաչափի աղբը գոյանում է մարդու կենսագործունեության ընթացքում, ինչպես կոշտ կենցաղային աղբը, և ծավալով երկրորդ տեղն է զբաղեցնում կոշտ կենցաղային աղբից հետո:

5. Կյանքի պայմանների բարելավումը, տեխնոլոգիական ու նորարարության զարգացման ընթացքը, շուկայում կենցաղային կամ էլեկտրական սարքավորումների և իրերի նոր ու բարելավված մոդելների առաջարկը հանգեցնում է հին իրերի դեն նետմանը և դրանք նորերով փոխարինմանը և արդյունքում տարեցտարի ավելանում է խոշոր եզրաչափերի աղբի ծավալը:

6. Խոշոր եզրաչափի աղբը՝ մարդու կենսագործունեության հետևանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում

առաջացող աղբն է, որի չափերը գերազանցում են 1 խորանարդ մետրը, և որի ֆիզիկական հատկություններից ելնելով (չափ, ծավալ կամ քաշ)՝ անհնար է դրա հավաքումը, պահումը կամ փոխադրումը կոշտ կենցաղային աղբի համար նախատեսված տեխնիկական միջոցներով:

7. Խոշոր եզրաչափի աղբ կարող են հանդիսանալ սկզբնական սպառողական հատկությունները կորցրած կամ չօգտագործվող իրերը՝ կահույքի պարագաներ (բազմոցներ, սեղաններ, պահարաններ, աթոռներ, ներքնակներ և այլն), գորգեր, կախիչներ, հայելիներ, շերտավարագույրներ, բնակարանների ընթացիկ վերանորոգումից առաջացող աղբ[1] (հատակի և պատերի հին ծածկույթներ, ապամոնտաժված շրջանակներ, դռներ) (կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման համակարգեր ու սարքեր), կենցաղային սարքավորումներ (սառնարաններ, միկրոլիքային վառարաններ, գազոջախներ և այլն), շահագործումից դուրս եկած ավտոտրանսպորտային միջոցների թափքեր ու հենասարքեր, սպորտային տեխնիկա (սահնանկներ, հեծանիվներ, դահուկներ, սկուտերներ), ծանր առարկաներ (մեծ ծաղկամաններ, դեկորատիվ իրեր՝ քարեր, կերամիկա):

8. Սույն ընթացակարգի սահմանմամբ նախատեսվում է նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում խոշոր եզրաչափի աղբի կանոնակարգված հավաքման, պահման, փոխադրման, ինչպես նաև երկրորդային օգտագործման ու օգտահանման և դեպի աղբավայրեր փոխադրվող աղբի քանակի նվազեցման համար:

9. Մարդկանց և շրջակա միջավայրի համար վտանգավոր հատկություններ ունեցող և ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանով հաստատված վտանգավոր թափոնների ցանկում ներառված խոշոր եզրաչափերի աղբի գործածությամբ կարող են զբաղվել իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկները, որոնք «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով ստացել են վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիայի համապատասխան ներդիրներ:

10. Սույն ընթացակարգով սահմանված խոշոր եզրաչափի աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, պահման և հեռացման գործընթացներն իրականացվում են գոյացող, հեռացվող (ոչնչացվող, վնասազերծվող, տեղադրվող) և օգտահանվող թափոնների

[1] Բնակարանների հիմնանորոգումից և կապիտալ վերանորոգումից , այդ թվում՝ պատերի քանդումից առաջացած աղբը հանդիսանում է շինարարական աղբ:

հաշվառում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի «Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» թիվ 1343-Ն որոշման:

3. ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ

11. Խոշոր եզրաչափի աղբ գոյացնողը պատասխանատու է դրա կուտակման, հավաքման ու հեռացման գործընթացի համար:

12. Խոշոր եզրաչափի աղբն արգելվում է կուտակել կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններում:

13. Որպես խոշոր եզրաչափի աղբի կուտակման վայր օգտագործվում է երկու տարբերակ.

1) 7-ից 32 խմ ծավալով հատուկ աղբատարաներ/ կոնտեյներներ/

2) համապատասխան բաց տարածքներ:

14. Հատուկ աղբատարաները կարող են տեղակայել համայնքը կամ օպերատորը, ինչպես նաև համայնքի կողմից տրված խոշոր եզրաչափի աղբի հավաքման ու փոխադրման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը՝ համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան: Ընդ որում, հատուկ աղբատարաները կարող են տեղակայվել ըստ անհրաժեշտության, կամ փոփոխական տարածքներում՝ ըստ պահանջի:

15. Խոշոր եզրաչափի աղբի կուտակման համար համապատասխան բաց տարածքները կարող են կազմակերպվել համայնքի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա՝ հստակ նշված տարածքներում կամ ժամանակավոր համապատասխան տարածքներում:

16. Խոշոր եզրաչափի աղբի կուտակման բաց տարածքները կազմակերպվում են անջրաթափանց բետոնե կամ ասֆալտապատ ծածկույթով, եզրաքարերով և երեք կողմից առնվազն 1 մետր բարձրությամբ ցանկապատերով:

17. Խոշոր եզրաչափի աղբի կուտակման վայրերում պետք է տեղադրված լինի տեղեկատվություն աղբի հեռացման ժամկետների, կոնտեյներների փոխադրումն իրականացնող կազմակերպության վերաբերյալ:

18. Խոշոր եզրաչափի աղբի կուտակման համար նախատեսված կոնտեյներները ենթակա են լվացման և ախտահանման՝ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 25-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

4. ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

19. Խոշոր եզրաչափի աղբի կուտակումն ու հավաքումը կարող է իրականացվել ինչպես համակարգված՝ հաստատված ժամանակացույցի կամ ըստ ներկայացված պահանջի:

20. Աղբահավաք կոնտեյներներից և հարթակներից խոշոր եզրաչափի աղբի հավաքման անհնարինության պարագայում հավաքումն իրականացնող կազմակերպության կողմից ապահովվում է խոշոր եզրաչափի աղբի հավաքումը դեպի անմիջապես հատուկ նշանակության տրանսպորտ:

21. Խոշոր եզրաչափի աղբի առանձին հավաքումը գլխավորապես իրականացվում է մեքենայացված եղանակով:

22. Խոշոր եզրաչափի աղբի մեխանիկական (ձեռքով) հավաքումը (տեսակավորումը) իրականացվում է առողջապահական (սանիտարական) և բնապահպանական օրենսդրության պահանջներին համապատասխան:

23. Խոշոր եզրաչափի աղբի կուտակման վայրի տարածքը աղբի բեռնման ժամանակ մաքրվում է բեռնումն ու փոխադրումը իրականացնող իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց կողմից: Աղբահավաք կոնտեյներից և/կամ հարթակներից դուրս հարևանությամբ խոշոր եզրաչափի աղբի կոտակման պարագայում տարածքի մաքրումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները:

24. Խոշոր եզրաչափի աղբի հավաքումը հանդիսանում է լրացուցիչ/վճարովի ծառայություն:

5. ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

25. Խոշոր եզրաչափի աղբի փոխադրումն իրականացվում է դրա համար նախատեսված հատուկ մասնագիտացված տեխնիկայի միջոցով: Կոշտ կենցաղային աղբի համար նախատեսված աղբատար մեքենաները նախատեսված չեն խոշոր եզրաչափի աղբի փոխադրման համար:

26. Խոշոր եզրաչափի աղբը կարող է փոխադրվել ինչպես ամբարձիչ մեխանիզմներով հագեցած հատուկ նշանակության աղբատար մեքենաներով (կոնտեյներ փոխադրող), այնպես էլ տարբեր տարողունակությամբ սովորական բեռնատարներով:

27. Խոշոր եզրաչափի աղբի բեռնումը և բեռնաթափումն իրականացվում է ձեռքով (փոքր չափերով և զանգվածով աղբի պարագայում) և հատուկ բեռնող մեխանիզմների օգնությամբ:

28. Փայտյա հիմքով խոշոր եզրաչափի աղբը փոխադրումից առաջ կարող է հավաքման կետերում մասնատվել կոտրող մեխանիզմներով հագեցած հատուկ աղբատար մեքենաներում:

29. Շահագործումից դուրս եկած ավտոտրանսպորտային միջոցների վտանգավոր թափոններ հանդիսացող մասերի, դրանցում առկա նյութերի (էլեկտրական կուտակիչների և մարտկոցների, այլ էլեկտրական մասերի, նավթամթերքի, քսայուղերի, քսուքների, յուղման-հովացման հեղուկների, ռետինե, պլաստմասսայից և այլ նյութերից թափոններ) առանձնացման, հեղուկների դատարկման և դրանց հետ կատարվող այլ աշխատանքներն իրականացվում են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված լիցենզավորված անձանց կողմից, իսկ մետաղյա թափքերն ու հենասարքերը հետագա օգտահանման նպատակով մասնատվում են ավելի փոխադրելի չափերի:

30. Խոշոր եզրաչափի աղբի փոխադրումն իրականացվում է ըստ ժամանակացույցի՝ կանոնավոր, կամ ըստ պահանջի՝ մեկանգամյա: Ընդ որում, փոխադրումն իրականացվում է աղբի կուտակման չափերին համապատասխան, բայց ոչ ուշ քան շաբաթական 1 անգամ:

31. Խոշոր եզրաչափի աղբի փոխադրումը կուտակման վայրերից դեպի թափոնների վերամշակման, օգտահանման, վնասազերծման և հեռացման համար նախատեսված օբյեկտներ իրականացվում է համապատասխան բեռնատար տրանսպորտով և բեռնող մեխանիզմներով ապահովված կազմակերպությունների կողմից:

32. Խոշոր եզրաչափի աղբի փոխադրումը հավաքման կետերից պետք է իրականացվի առավել արդյունավետ երթուղիներով և սխեմայով:

33. Խոշոր եզրաչափի աղբ փոխադրումն իրականացվում է նվազագույնին հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը՝ պահպանելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջները:

6. ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ

34. Խոշոր եզրաչափի աղբը տեղափոխվում է հատուկ տարածք, որտեղ այն տեսակավորվում է, որից հետո մի մասն ուղարկվում է վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման, իսկ մի մասը՝ հեռացման:

35. Երկրորդային ռեսուրս հանդիսացող խոշոր եզրաչափի աղբը ենթակա է վերաօգտագործման, վերամշակման և օգտահանման՝ առողջապահական (սանիտարական) և բնապահպանական օրենսդրության պահանջներին համապատասխան:

36. Խոշոր եզրաչափի աղբի հետ գործածությունը ներառում է հետևյալ քայլերը.

1) տեսակավորում,
2) մասնատում,
3) ձեռքով առանձնացում,
4) վտանգավոր նյութերի դուրս բերում,
5) խոշոր եզրաչափի աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման կամ հեռացման նախապատրաստում:

37. Խոշոր եզրաչափի աղբի ձեռքով առանձնացման փուլում ձևավորվում է աղբի երեք հոսք.

1) առանձնացված խոշոր եզրաչափի աղբ, որն ուղարկվում է մասնատման,
2) երկրորդային հումք, որն ուղարկվում է օգտահանման,
3) առանձնացված խոշոր եզրաչափի աղբ, որն ուղարկվում է թաղելու նախապատրաստելուն:

38. Խոշոր եզրաչափի աղբի տեսակավորումն իրականացվում է հետևյալ հիմնական խմբերով և բաղադրիչներով.

1) Փաթեթվածք - ստվարաթղթե տուփեր, փայտյա արկղեր, պոլիմերային փաթեթվածք, պոլիստիրոլ և այլ փաթեթվածքներ.
2) Կենցաղային սարքեր – սառնարան, գազօջախ, վառարան և այլն,
3) Էլեկտրոնային սարքեր ՝ հեռուստացույց, մոնիտոր և այլ սարքեր,
4) Կահույք – փափուկ կահույք, կահույքի վահանակներ, դռներ և այլն,

5) Սանտեխնիկա – լվացարան, զուգարանակոնք, լոգարան, խողովակներ և այլ սանտեխնիկա,

6) Շահագործումից դուրս եկած ավտոտրանսպորտային միջոցների թափքեր ու հենասարքեր,

7) Այլ՝ ըստ պահանջի ու անհրաժեշտության:

39. Խոշոր եզրաչափի աղբի հոսքի մեջ օրենսդրությամբ սահմանված վտանգավոր բաղադրիչներ են հանդիսանում ավտոմոբիլների մարտկոցները, բժշկական սարքավորումները, ներկերի մեծ տարաները և այլն, որոնց առանձնացումն իրականացվում է սահմանված նորմերին ու կանոններին համապատասխան:

40. Խոշոր եզրաչափի աղբի մասնատումը իրականացվում է մեքենայացված եղանակով, իսկ մասնատման ձևի ընտրությունը կախված է նյութի ֆիզիկական հատկություններից և չափերից:

41. Խոշոր եզրաչափի աղբի մասնատման ձևերն են.

1) պառակտում,

2) ջախջախում,

3) հարվածային մասնատում,

4) պատառոտում,

5) շփում քայքայում:

42. Խոշոր եզրաչափի աղբի մասնատումից առաջացած բաղադրիչները, որոնք օգտահանման տեսանկյունից այլևս արժեք չեն ներկայացնում և չեն պարունակում վտանգավոր նյութեր, հորիզոնական կոմպակտորներով, հետագա սեղմումից հետո նախապատրաստվում են աղբավայր տեղափոխելուն: